«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 77/03

ք. Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 17.01.2023թ. ժամը 16:10

Համաձայն «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝09.01.2023թ. Ա/Ձ Դավիթ Ասատրյանից ստացված թիվ 01 դիմում-բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով «Տելեմարկետ»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Ռուզան Հովհաննիսյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում արծածված հանգամանքների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար՝ ս/թ-ի Հունվարի 17-ին,ժամը 16-00-ին՝ք.Երևան,Արշակունյաց 5 հասցեում հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմինե Մովսիսյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Դիմումատու՝Ա/Ձ Դավիթ Ասատրյանը:
«Տելեմարկետ»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Ռուզան Հովհաննիսյանը

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Հանձանժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը

Հանձնաժողովի անդամներ՝Արմինե Մովսիսյանը հեռախոսով զգուշացրել էր իր չներկայանալու մասին և խնդրել էր իրեն հնարավորություն տալ մասնակցել նիստին հեռակապի միջոցով:

Դիմումատու՝Ա/Ձ Դավիթ Ասատրյան- լիազորված ներկայացուցիչ՝Աննա Համբարձումյանը:
«Տելեմարկետ»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Ռուզան Հովհաննիսյանը և իր ներկայացուցիչ Արտակ Ալոյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝
1. «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 09.01.2023թ-ին ստացված Ա/Ձ Դավիթ Ասատրյանի դիմում-բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով ՝«Տելեմարկետ»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Ռուզան Հովհաննիսյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, բողոքում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը բացեց նիստը ստուգեց ներկաների անձը հաստատող փաստաթղթերը,լիազորագրերը,որի ընթաքքում խնդրեց դիմումատու ներկայացուցչին ներկայացնել փաստաբանի վկայականը:Ներկայացուցիչը հայտնեց որ ինքը փատսաբանի որոկավորում դեռ չի ստացել, բայց բողոքը ինքն է օգնել գրելու և տեղյակ է գործի մանրամասնություններին:Հանձնաժողովի նախագահն այդ դեպում խնդրեց ներկայացնել ապացույց անհատ ձեռնարկատիրոջ հետ աշխատանքային հարաբերությունների մասով,ներկայացուցիչը ապացույցներ չներկայացրեց,բացի իր և Ա/Ձ-ի նույականացման քարտերի լուսապատճեներից:

Հանձնաժողովի նախագահն արտահայտեց այն կարծիքը որ հանձնաժողովի նիստին ներկայացրած լիազորագիրը պատշաճ չէ և ներկայացուցիչը չի կարող ներկայացնել դիմումատուի շահերը այդ ներկայացրած ապացույցների հիմքով,բայց քանի որ նա իր հայտարարությամբ ծանոթ է գործի մանրամասնությունների կարող է մասնակցել նիստին որպես վկա եթե համաձայն են հանձնաժողովի մասնակիցները և կողմը:

Հանձնաժողովի անդամները համաձայնեցին նախագահի կարծիքի հետ,որին դեմ չեղավ նաև սնանկության գործով կառավարիչը և նրա ներկայացուցիչը:

Հանձաժողովի նիստի նախահահողը՝«Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործերով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման Կարգի» 4.6 հոդվածի կարգով դիմում բողոքը հակիրճ ներկայացնելու համար ձայնի իրավունք տվեց Աննա Համբարձումյանին,ով մասնավորապես ներկայացրեց որ բողոքաբերը հանդիսանում է անհատ Ձեռնարկատեր և սնանկության վարույթում պարտատեր, շահագրգռված լինելով,որ պարտապանի գույքը հրապարակային սակարկություններով շուտ վաճառվի,ինչին նպաստելու համար իր գտած գնորդների հետ 22.12.2022թ-ին,նախապես հեռախոսով կապվելով կառավարիչ՝ Ռ.Հովհաննիսյանի հետ,այցելել են կառավարչի նշած պահեստ,ախուրդում վաճառավող գույքի ուսումնասիրության նպատակով, բայց ուսմնասիրել չեն կարողացել,քանի որ պահեստը եղել է փակ,իսկ բալանին/պահակի հայտարարությամբ/ գտնվել է կառավարչի մոտ:Բողոքաբերի անունից շեշտվեց,որ կառավարիչը ինչու է իրենց ուղարկում պաեստ գույք նայելու եթե գիտեր,որ դուռը փակ է և բալանին գնտվում է իր մոտ,ասելով,որ ես հիվանդ եմ,բայց պահակը ամեն ինչ կցուցադրի,այսինքն կառավարչի նման անգործության հետևանքով ոչ ինքը,որպես պարտատեր և ոչ պոտենցիալ գնորդները հնարավորություն չեն ունեցել ծանոթանալու գույքի կազմին,վիճակին և փաթեթավորմանը, որպիսի պատճառով էլ աճուրդը և նման ևս 13 աճուրդներ չեն կայանում գնորդներ չլինելու պատճառով և ինքը որպես պարտատեր և մյուս պարտատերը չէն կարողանում ստանալ իրենց գումարները,կրելով վնասներ:Նշվեց նաև որ կառավարիչը չի բավարարում իրենց պահանջները առ այն որ լրացուցիչ հայտարարություններ տա նաև այլ լրատվական կամ ինտերնետային միջոցներով/սայտերով/,հայտարարությունները չի փակցնում դատարանում հատուկ հատկացված վայրում,չի կազմում աճուրդը չկայանալու մասին արձանագրություններ:

Վերոնշյալի հիմքով բողոքաբերը գտնում է,որ «Տելեմարկետ»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Ռուզան Հովհաննիսյանը դրսևորել է անբարեխիղճ վարքագիծ և իր անգործությամբ նպաստել է յուրաքանչուր անգամ լոտի գնի 20 տոկոս նվացման,ինչի հետևանքով առաջացել է վտանգ,որ հնարավոր չի լինի ապահովվել բոլոր պարտատերերի պահանջների բավարարումը,ուստի խնդրել է հարուցել կարգապահական վարույթ և կառավարչին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

Հանձնաժողովի նախագահն խնդրեց հանձնաժողովի անդամներին հայտնել կարծիքներ:

Հանձնաժողովի անդամ՝Ռ.Խալաթյանը հայտնեց,որ լավ կլիներ լսեին նաև կառավարչին հետո անցնեն կարծիքների փոխանակմանը:

Հանձնաժողովի նախագահն ձայնի իրավունք տվեց կառավարչին և հայտնեց որ կառավարիչը գրավոր բացատրություններ չի ներկայացրել:Կառավարչի ներկայացուցիչ Ա.Ալոյանը ներկայացրեց հանձնաժողովին,որ կառավարչի կողմից իրականացվել են օրենքով և դատարանի որոշումներով սահմանված գործողություններ և դրանք իրականացվել են սահմանված կարգերով և ժամկետներով:Ներկայացվեց հանձնաժողովին ապացույցներ աճուրդների հայտարարությունները դատարանի սահմանված վայրում տեղադրված լինելու վերաբերյալ:Ներկայացուցիչը նշեց որ բողոքում նշված օրը կառավարիչը չի կարողացել ապահովվել գույքի պահպահնման վայրում ուսումնասիրությունը հիվանդության պատճառով,որի մասին տեղեկացրել է դիմումատուին հեռախոսազրույցի ժամանակ,բայց դիմումատուն պնդել է գույքի ուսումնասիրությունը տեղում կատարելու հարցում,չնայած այն հանգամանքին,որ կառավարիչը ստեղծել է հնարավորություն այլ վայրում օրինակներին ծանոթանալու համար,բայց դիմումատուն ցանկացել է նաև ընհանուր քանակները ուսումնասիրել,որի վերաբերյալ կառավարիչը ներկայացրեց իր հիվադ լինելու փաստը ապացուցող «Անաշխատունակության թերթիկների լուսապատճենները:

Կառավարիչը նշեց նաև որ նման հարցումներ սնանկության վարույթի ընթացքում պարտատիրոջից ստացվել է բազմաթիվ անգամներ և տարբեր բովանդակությամբ ու պահանջներով այդ թվում նաև այլ սայտերով հայտարարությունների տրման մասին: Բոլոր հարցումներին և գրություններին կառավարչի կողմից տրվել է գրավոր պատասխաններ և ընհանրապես վարույթի ընթացքում կառավարչի կողմից որևէ հանգամանքում անգործություն չի դրսևորվել,որպիսի պատճառաբանություններով էլ կառավարիչը և նրա ներկայացուցիչը բողոքը անհիմն լինելու պատճառաբանությամբ.խնդրեցին հանձնաողովից կարճել կարգապահական վարույթը կառավարչի մեղքի բացակայության պատճառաբանությամբ:

Հանձնաժողովի անդամ Ռ.Խալաթյանը ուսումնասիրելով ներկայացված փաստաթղթերը և դիմումը,հայտնեց որ ըստ էության բողոքի հիմք է կացմել պարտատիրոջ կողմից այն ընկալումը որ կառավաիրչը իմանալով որ գույքի գտնվելու վայրում դուռը փակ է և բալանին գտնվում է իր մոտ,իրենց ուղարկել այդ հասցե գույքի ուսմնասիրության համար:Դիմումատուի կարծիքով այդ գործողության մեջ առկա է կառավարչի կողմից դրսևորված ոչ բարեխղճություն.որն էլ մինչ օրս պատճառ է հանդիսանում գույքի չիրացվելուն և իրենց հանդեպ պարտավորությունների չմարմանը:Հանձնաժողովի անդամը նձեց նաև որ կառավարիչի գործողությունները ըստ էության օբեկտիվ և բարեխիղճ են պայմանավորված այն հանգամանքով որ այդ պարագայում կառավարիչը հիվանդ է եղել և ֆիզիկապես չի կարողացել ապահովվել գույքի ուսումնասիրությունը տեղում և բնական է նաև չի վստահել բանալին այլ մարդու,բայց իր հիվանդության մասին հայտնել է դիմումատուին և նշել որ դա խոչնդոտ է հանդիսանում իր ֆիզիկական ներկայությանը:Վերոնշյալի հիմքով հանձնաժողովի անդամը եզրակացրեց,որ կառավարչը աճուրդի հայտարարություն տալու և այդ հայտարարությամբ գույքի ուսումնասիրության օր նշանակելով, չեր կարող կանխավ իմանալ որ ինքը այդ օրը հիվանդ է լինելու և չի կարողանալու կազմակերպել գույքի ուսումնասիրությունը,այսինքն հիվանդանալ կարող են բոլորը այդ թվում նաև բողոքաբերը և դրա պատճառով որևէ պարտականություն չկատարելը չի կարող համարվել անբարեխղճություն:

Հանձնաժողովի նախագահն անդրադառնալով դիմումատուի նշված «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 23.1 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված կառավարչի համար պարտադիր վարքագծի կանոնին,այն է.

- **նպաստել կառավարիչների նկատմամբ վստահության ձևավորմանը:**

հանձնաժողովի նախագահն հարկ համարեց ներկայացնել,որ ընդհանուր առմամբ կառավարիչը իր գործունեության պետք է իրականացնի հետևյալ սկզբունքներից ելնելով՝

1.Անկախության,
2.Օբեկտիվության,
3.Բարեխղճության,
4.Ողջամտության,
5.Արդյունավետության,նշված սկզբունքների պահպանությունն է բերում կառավաչի գործունեության նկատմամբ վստահության ձևավորմանը:

Վերլուծելով կառավարչի գործողությունները այս սկուզբունքներից ելնելով,կստացվի որ կառավարիչը գործել է անկախ,պռագմատիկ ելնելով օբեկտիվ իրավիճակից և բարեխիղճ ,բայց չի ցուցաբերել բավարար ողջամտություն իր գործունեության արդյունավետությունը ապահովելու համար,այսինք ողջամիտ գնահատելով իրավիճակը ակնհայտ էր որ բողոքաբերը տեղեկանալով կառավարչի հիվանդության մասին պնդել է գույքի ուսումնասիրության կազմակերպան գործընթացի իրականացման համար,ուստի ողջամիտ գնահատելով իրավիճակը պետք է նրան առաջարկվեր այլ տարբերակ,քան ուղարկվեր գույքի գտնվելու վայր,կանխավ իմանալով,որ գույքը փակի տակ է և մուտքի բալանին իր մոտ է,որպիսի գործողությունը պարտադիր չէր,որը հետագայում չէր կարող ապահովել գործի արդյունավետ շարունակությունը:

Վերոնշյալի հիմքով հանձնաժողովի նախագահն նշեց,որ կառավարչի հիվանդության փաստը պետք է ընդունվի որպես մեղմացուցիչ հանգամանք և առաջարկեց հայտարարել՝ «Տելեմարկետ»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Ռուզան Հովհաննիսյանին նախազգուշացում և հանձնարարել որպեսզի հետագայում իր գործունեության ընթացքում

ավելի ողջամիտ գնահատի իր գործողությունները,գործի արդյունավետությունը ապահովելու համար:

Հանձնաժողովի ներկա անդամները նույնպես համաձայնվելով առաջարկին հարցը դրվեց քվեարկության.

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 4

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 09.01.2023թ-ին ստացված Ա/Ձ Դավիթ Ասատրյանի դիմում-բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով `«Տելեմարկետ»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Ռուզան Հովհաննիսյանի գործողությունները /անգործության/ / փաստերի նկատմամբ վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, բողոքում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի, կանոնակարգի համապատասխանության վերաբերյալ հարուցված վարույթի արդյունքներով՝ միջնորդել «ՍԳԿԿ» ԻԿԿ Դիտորդ խորհրդին «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 5 հոդվածի 5.1 կետի 5-րդ ենթակետի հիմքով `«Տելեմարկետ»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Ռուզան Հովհաննիսյանին հայտարարել նախազգուշացում և հանձնարարել,որ իր գործունեության ընթացքում ավելի ողջամիտ գնահատի իր գործողությունները,գործի արդյունավետությունը ապահովելու համար:

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Գևորգյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան